



ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՈՆԵՐ

«Ման ոչ իմացեալ ման է, ման
իմացեալ՝ անմահութիւն»:



ետրվարի 21-ին, հինգշաբթի
օրը, Հայաստանյայց Առաքե-
լական Ս. Եկեղեցին տոնում է
Սրբոց Վարդանանց տոնը՝
«Որք կատարեցան ի Մեծի Պատերազմին»:

Վարդանանց տոնը եկեղեցական մեր տո-
նացույցի մեջ սահմանված միակ ազգային
տոնը չէ, — մենք մի շարք ազգային տոներ
ունենք, — սակայն հայ ժողովրդի ազատա-
գրական շարժումների պատմության մեջ
Վարդանանց հերոսամարտն իր բնույթով, իր
համաժողովրդական համախմբվածությամբ,
իր հերոսական դրվագներով բացառիկ տեղ
ունի: Ինչպես բնորոշել է Նորին Ս. Օծություն
Տ. Տ. Գևորգ Զ. հայրենասեր կաթողիկոսը՝
Վարդանանց հերոսամարտի 1500-ամյակի
առթիվ իր գրած կոնդակում՝ Վարդանանց
հերոսամարտը «եղել է, կա և կմնա առնավետ
ազգայանք էջը հայոց պատմության, հոգե-
զմայլ մի էջ, որ դարեր անընդհատ ոգեշնչել
և մխիթարել է հայազն սերունդներին և ազ-
գային-ֆաղափական առաքինության ուղիներ
պատգամել Հայրենիքին, Ազգին և Եկեղե-
ցուն»:

387 թվին Հայաստանը, ինչպես հայտնի է,
բաժանվեց աշխարհակալ երկու պետություն-
ների — Պարսկաստանի և Բյուզանդիոնի մի-

ջև: Բյուզանդական՝ կայսրությունն իր բա-
ժին Հայաստանում շատ շուտ վերացրեց հա-
յոց ֆաղափական անկախությունը, իսկ Պարս-
կաստանն իր բաժնում բույլ տվեց շարունա-
կել հայերի անկախությունը մինչև 428 թվա-
կանը, երբ զանրեկեց արվեց վերջին հայ Ար-
շակունի թագավորը և վերջ տրվեց ինքնու-
րույն հայ պետականությանը:

Սասանյան արհունիքը, սակայն, բավա-
րարված չէր սրանով. նա ցանկանում էր հա-
յերին զրկել ո՛չ միայն ֆաղափական անկա-
խությունից, այլև ազգային ներքին ինքնու-
րույնությունից: Նա ցանկանում էր հայ ժո-
ղովրդին կրոնափոխ անել և ձուլել պարսիկ
ժողովրդի մեջ:

Սասանյանների այս ֆաղափականությունն
ավելի բացահայտ դարձավ Հազկերտ Երկ-
րորդի օրոք:

Հայաստանը Տիգրանի համար կարևոր նշա-
նակություն ուներ իր ռազմա-ստրատեգիա-
կան դիրքով, բնական հարստություններով,
հարուստ ու շեն ֆաղափներով:

Նվահա «հին օձը»՝ Միհրենեսերը, սկսում է
խորհուրդ տալ Հազկերտին. «Նախ և առաջ
Հայոց մեծ երկիրն է, որ շատ պետական է
և օգտակար, և նրա հետ էլ Վրաստանն ու
Աղվանքը... Դուր ինքներդ և բոլոր արիները
գիտեն, քե ինչպես մեծ ու պիտանի երկիր է

հայոց աշխարհը... Եթե նրանց մեր հավատին դարձնենք և վարժենենք մեր օրենքներին... դրանից հետո նույն աշխարհը սերտ սիրով մեր իշխանության ներքո կլինի. և եթե հայերը հաստատ մեր լինեն, վրացիներն ու աղվաններն այնուհետև մերն են ու մերը» (Վազար Փարպեցի):

Տիգրանից պակաս վտանգավոր, պակաս նենգ չէր Բյուզանդիոնը: Պետք է ասել, որ հայ ժողովրդի պատմության մեջ Տիգրանի բռնության հետ միշտ մրցել է «Բիստունյա» Արևմուտքի՝ Բյուզանդիայի ավելի նրբին, ազնվի «մշակված», բայց ավելի վայրագ, ավելի դաժան մաքիավելական փաղափակնությունը:

Մեր ժողովուրդը երկուսի դեմ էլ հերոսական պայքար է մղել հավասար ատելությամբ և վեհականությամբ:

Երկու կրակի, երկու ֆարի արանքում էր հայությունը. երկրի միասնությունն ու ժողովրդի միասնականությունը բաժանված էր երկու բշնամի պետությունների միջև: Քաղաքական այս անապահով վիճակը և երկրի պառակտվածությունը լուրջ վտանգ էր ներկայացնում հայ ժողովրդի ֆիզիկական գոյության համար: Առաջավոր մարդկանց համար ճգնաժամային այդ ժամանակաշրջանում օրվա առաջնահերթ խնդիրն էր՝ ստեղծել մի այնպիսի ամուր պատվանդան, մի այնպիսի գաղափարական զենք, որը հնարավորություն տար Հայաստանի երկու մասերի միջև ստեղծելու ազգային, կուլտուրական, հոգևոր կապ՝ փրկելու համար հայ ժողովրդի միասնականությունը: Հայ ժողովուրդը չունեւ իր սեփական զինքը, գրականությունը: Նկեղեցիներում պաշտամունքի լեզուն անհասկանալի էր: Ավետարանը կարդում էին հունարեն կամ ասորերեն և քարգմանում հայերենի: Պետք էր ուրեմն մի արմատական միջոց՝ հայրենիքն ու հայությունը օտար փաղափակն ու կուլտուրական սպառնացող վտանգներից փրկելու համար: Ս. Մեսրոպի հոգում հասունացել էր այդ զենքը. դա հանդիսացավ հայ տառերի գյուտը և հայ գրավոր գրականության սկզբնավորությունը: Միայն և միայն ինքնուրույն ազգային գրականության և կուլտուրայի ստեղծումով կարելի էր մի գորավոր պատենշ կանգնեցնել ընդդեմ Իրանի և Հռոմի: Գրերի գյուտը և հայ գրականության սկզբնավորությունը հայ ժողովրդի ազգային գոյության պահպանման, ամրապնդման տեսակետից պատմական մեծ նշանակություն ունեցավ:

Փաստ է նաև, որ 4-րդ դարից սկսած՝ իրանական մագդեցական կրոնը փորձում էր ներխուժել Հայաստան. միայն հայ պետականության ամրապնդումով, ազգային կուլ-

տուրայի զարգացումով երկրում կարելի էր ստեղծել մի հզոր պատվար՝ գաղաշտական արշավի դեմ:

5-րդ դարում Ս. Մեսրոպի ջանքերով, քարգմանչաց օժանդակությամբ ստեղծված հայ ազգային կուլտուրան ի սպաս դրվեց հայությանը: Հայ ժողովուրդը գրականությամբ մեջ էր տեսնում իր ազգային գոյության պահպանման հզոր ազդակներից մեկը: Այդ դարը հայ ժողովրդի ինքնագիտակցության ու հերոսական գոյամարտի դարաշրջանն է: Խորենացին, Նղիշեն, Բյուզանդը, Փարպեցին իրենց պատմական երկերում մեր ժողովրդի ուշադրությունն են բևեռել մեր հերոսական անցյալի վրա, հայ ժողովրդի ազատագրական պայքարի էջերի վրա, իրենց ժամանակակիցների մեջ զարթեցնելու համար հայրենասիրություն, ազգային արժանապատվություն և ինքնագիտակցություն: 5-րդ դարի մատենագրության յուրաքանչյուր էջը մեկ մեկ հերոսական պատենշներ են Իրանի և Հռոմի դեմ՝ հայրենասիրության, ազատության, ինքնագիտակցության զեղուն արտահայտությամբ:

Վարդանանց պատերազմն անա այդ ոգու ամենավառ հերոսական մեկ դրվագն է:

Սխալ կլինի վարդանանց հերոսամարտը բնութագրել զուտ փաղափական, կամ զուտ կրոնական պատերազմ. ո՛չ մեկը, ո՛չ մյուսն առանձին վերցրած, այլ «Երկուսն ի մի»: Նղիշեն շատ ճիշտ է բնորոշել այն՝ «Հայոց պատերազմ»: Վարդանանց պատերազմը հայ ներքին ինքնուրույնության, հայ ժողովրդի կրոնա-ազգային և փաղափական իրավունքների պաշտպանության պատերազմ էր:

5-րդ դարում մեր յուսավորիչ քարգմանիչները, Ս. Մանակի և Ս. Մեսրոպի գլխավորությամբ, մի կուլտուրական շարժում ստեղծեցին՝ գաղափարական զետեղի վրա՝ պայքար մղելով հանուն հայ մշակույթի ինքնուրույնության, ընդդեմ Հռոմի և Տիգրանի: Այդ պայքարն առաջ էր տարվում մեծ եռանդով, խաղաղ ճանապարհով, ֆարզությամբ: Իսկ դարի կեսերին, ազգային պետական ինքնուրույնության անկումից հետո, Ավարայրում պայքարը փոխադրվել էր՝ ռազմական գծի վրա՝ ընդունելով լայն ժողովրդական աղբյուրություն բնույթ: Ավարայրի ճակատամարտը շարունակությունն էր զենքով այն պայքարի, որը սկսել էին դարի սկզբում քարգմանիչ յուսավորիչները նույն նպատակի համար: Վարդանանց զինյալ ապստամբությունն ուղղակի շարունակությունն էր քարգմանիչ յուսավորիչների կուլտուրական պայքարի: Քարգմանչաց կուլտուրական շարժումը սկիզբն էր պայքարի, վարդանանց հե-

րոսամարտը՝ բարձրագույն կետը, իսկ նվար-
սակը՝ վերջնական հաղթանակը: Քարգմանիչ-
ները մեծ հայրենասերներ էին. նրանք կրո-
վում էին և՛ գրչով, և՛ սրով հանուն հայրենի-
քի և նրա արքայությունների, ապրում էին իրենց
ժողովրդի ողջ ողբերգությունը, տրամում,
հրճվում նրա հետ և անհրաժեշտության դեպ-
քում համահավասար բաժանում հայ ժողո-
վրդի տխուր հակառակորդին ու ընդունում դա-
նության բաժակը ախարավայրերում:

«Յայսմ հաստոց զմեզ ո՛չ ոք կարէ խախ-
տել, ո՛չ հրեշտակք և ոչ մարդիկ, ոչ սուր,
ոչ հուր և ոչ ջուր...»: Այս խոսքը, անվեհեր
խոսքերը մարտահրավեր էին պարսկական
բռնապետությանը, հանուն գաղափարի, հա-
նուն խորին համոզմունքների, հանուն հայ
նոգի, հայ ջրի, հայ հավատի, մարտահրա-
վեր «հայոց պատերազմի», «վասն հայրե-
նաց»:

Պարսից արևունիքը ճիշտ էր հասկացել մի
բան, որ ջնջելու համար իրեն երբեք ժո-
ղովուրդների հայրենասիրությունը՝ պետք էր
ջնջել նրանց կրոնը: Տիգրանն ու Հազկերտը
աշխատում էին ջնջել քրիստոնեությունը՝
ջնջելու համար հայ ժողովուրդը:

Ավարայրն է՛լ ավելի համախմբեց մեր ժո-
ղովրդին՝ նախարարներին, շինականներին և
հոգևորականությանը՝ հայրենիքի շուրջը:
5-րդ դարում, պարսկական նվաճողական ֆա-
ղափականության դեմ, հայ ժողովուրդը մղում
էր ժողովրդա-ազատագրական պայքար: Ա-
վարայրի հակառակմարտում ամեն մի ուզ-
միկ շատ լավ էր հասկանում, թե ինչի հա-
մար է կոչվում և արյուն քափում: Ընդհանուր
աղետը, հայության գոյությանն սպառնացող
մեծ վտանգն առաջ էր բերել մասսայական
ներստություն, մի ներստություն, որի արդա-
րացի, սուրբ լինելու մասին ոչ մի կասկած
չի կարող լինել: Մեր շինականները, ազա-
տանին և հոգևորականները — մեր ամբողջ
ժողովուրդը ներշնչված էին մի բարձր հայ-
րենասիրությամբ, որի մեջ իրար հետ կցորդ-
վում են հայրենիքի սերն ու հավատքի նվի-
րականությունը: Թշնամին գալիս էր ավա-
զակի պես, ջարդում էր, փանդում, արյուն ու
արցունք էր քողնում իր ետևից, գերում,
ննջում դաժանորեն՝ արմատախիլ անելով
ինչ որ հայկական է, ինչ որ հայ կոլտուրա-
յի, հայ հոգու կենիքն ու ինքնությունը:
Երկու կողմն էլ կրում: Տիգրանի համար բավարար չէր ո՛չ
հայ ժողովրդի լուռ հնազանդությունը, ո՛չ
հայկական բանակի հավատարմությունը, ո՛չ
ծանր տուրկերը. նա ուզում էր հիմնովին վե-
րացնել հայոց ներքին անկախությունը, իշխել
հայության ոգու վրա, սպանել նրան հոգե-
պես, բարոյապես, կոլտուրապես:

Հազկերտի համակին և Միհրենբեհի հոր-
դրականին տրված պատասխան-համակում
հայ ժողովուրդը ցույց է տվել իր վճռակա-
նությունն ու հաստատականությունը, պայ-
մաբեկու իր հոգու ազատության համար՝ ոչ
մի տեր ու տնօրեն չընդունելով իր հոգու
վրա:

Պարսկական նվաճողների դեմ իր ողջ հա-
սակով ծառանում են հայ ժողովուրդը, մեր
լեռներն ու Հայաստանի յուրաքանչյուր ֆար
ու ամրոց: Պիտի նկատի ունենալ, որ պայ-
քարը պարսիկ ժողովրդի դեմ չէր, որի հետ
հայ ժողովուրդը բարի դրացիական կապերով
է կապված եղել, այլ պարսիկ բռնակալների:
Այդ պայքարի յուրաքանչյուր դրվագը ցույց
է տալիս, որ ամեն և՛ ժողովուրդը և անընկ-
նելի նրա ոգին, երբ նա որոշել է ապրել և
ստեղծագործել, ամեն և՛ նրա գործը և ան-
ցողիկ՝ ամեն գույնի ու ձևի բռնակալություն:
Ժողովուրդն է, որ պատմություն է ստեղծում,
առաջ մղում այն և ծնում հերոսներ, որոնք
պայքարում են նույն այդ ժողովրդի կյանքի
և ապագայի համար, կատարելով իրենց
պարտքը արյունով:

Հայ ժողովուրդն Ավարայր գնաց հաղթե-
լու համար: Ավարայրը «խելագար ու հուսա-
հատ մի պատերազմ» չէր, ինչպես ոմանք
ձգտում են ներկայացնել՝ «պաշտպանելով
վասակի «ճաղափական հեռատեսությունը»:
Ավարայրում իրեն պարտված չի զգացել մեր
ժողովուրդը ո՛չ 5-րդ դարում, ո՛չ հետագա-
յում: Նա Ավարայրից հետո քողեց բաց հա-
կառով հակառակմարտ մղելու տակտիկան,
ավելի վճռական կերպով շարունակելու հա-
մար իր ազատագրական պայքարը իր ան-
մատչելի սարերի գլխին, և հաղթեց: Հայերը
չհաղթեցին Ավարայրում, «ճանգի ոչ երկ
կողմ էր որ յաղթեաց և կողմ էր որ պարտե-
ցա»: Հայությունը Ավարայր գնաց ո՛չ թե
մեռնելու, այլ հաղթելու և ապրելու համար:
Մահվան պաշտամունքը փոխած հասարակա-
կան խավի գաղափարախոսություն է, որը
խորք է հայ ժողովրդի ոգուն և նրա ողջ
պատմությանը: Ավարայրի հերոսներն ան-
գոսնում են մահը. «մահուամբ զմահ կո-
խեաց» և փառաբանում կյանքը. հաղթության
ուրախությունը քնալորում է նրանց և ուզ-
մի դաշտում «կեանք է կեանք կերբան գինու-
ներն հայուն»: Շարժվում է ժողովրդական
մեծ գետը. ողջ հայությունը քափվել է Ավա-
րայր: «Քաջութեամբ միայն մեռցուք, զանուն
ու զոգրիս կեր ծառահեցեցուք»: Հոսում է
ժողովրդական մասսան անընդհատ. «ժողո-
վեցին զբազմութիւն արանց և կանանց, յի-
հականաց և ազատաց, զհանաձայից և մե-
հակեցաց, երեւցան ամենեքեան զինեալք և

սաղաարտեալ, սուր ընդ մեջ և վահան ի ձեռին, ոչ միայն արանց ֆաշաց, այլ և կանանց առնականաց: Մի այսպիսի «աշխարհագոր» բանակից՝ հուսահատության, մանվան հոտ չի գալիս: Անփառունակ կյանքից փառավոր է հերոսական մահը, լավ է մեռնել կանգնած, քան սողալ թշնամու ոտների տակ: Վա՛յ այն ժողովրդին, որ չի իմանում զոհաբերվել բոլորանվեր կերպով, իր պատմության վճռական մոմենտներին: Պարտությունները չեն որոշում ժողովուրդների բախտը:

Պարսկական աշխարհակալությունն առաջ էր բերել մեր երկրում մի ամբողջ ժողովրդական շարժում, մի սրբազան հեղեղ, որի նպատակն էր ի չիք դարձնել վտանգը: Ժողովրդական մասսաների այդ ոգևորությունը մի ջերմ հայրենասիրական առողջ մթնոլորտ էր ստեղծել, ուր ամենքն էլ պատրաստ էին տալ իրենց կյանքը հայրենիքի և եկեղեցու համար: Հայրենասերների մամը անմահություն է: Վասակները չեն արդարացել երբեք պատմության և ժողովրդի դատաստանի առաջ. նրանք արդարանալու հիմք չունեն երբեք, ի՛նչպիսի դիվանագիտություն էլ գործադրած լինեն: Ի՛նչ անուն կարելի է տալ այդ «խոհեմ», «հեռատես» վասակներին, երբ մի ժողովուրդ իր մեծով ու փոքրով կազմակերպված դուրս է գալիս հերոսական պայքարի հանուն իր հայրենիքի և նրա սրբությունների, իսկ վասակները ստիպում են նրան կրկին անգամ խոնարհվել բռնակալների անարգ լծի տակ: Դա դիվանագիտություն չէ, այլ ազգային դավաճանություն:

451 թվի մայիսի 26-ի առավոտն է... «Ժամանակը գարնանային և դաշտերը ծաղկալից»։ Նիրհում է ոխտապանների բանակը, վարդանն է միայն, որ իր սպարապետական վրանի առաջ կանգնած, հսկում է: Քիչ հետո արևածագ է: Իրար դեմ են կանգնած երկու անեղ քանակներ: Մեկը հայրենասերների բանակն է՝ վարդանի գլխավորությամբ, որը եկել է պաշտպանելու իր երկրի ազատությունը և անհրաժեշտության դեպքում զոհվելու հայրենիքի սեղանի վրա՝ զեն ի ձեռին:

Երկրորդ բանակին առաջնորդել է նվաճողական բռնության ոգին: Առաջինները մղում են արդարացի, ազատագրական պայքար, երկրորդները մղում են անարդարացի, զավթողական պատերազմ:

Ահեղ մարտը սկսվում է նետածությունը: Իր սպիտակ ձիու վրա նստած՝ որպես վրեժի, ատելության, ֆաշության մարմնացում, վարդանը խոթում ու անվեներ, ազատագրական մարտի է տանում իր ետևից հայ ժողովրդի կորյուններին՝ Սասանյան հափշտակիչների և ավազակների դեմ:

Վարդանի և նրա 1036 ընկերների հերոսական մահով, «որք զանուանս իւրաքանչիւր ի դպրութեան կենաց գրեցին ի նմին ատուր ի մեծի պատերազմին», իջնում է պատմության վարագույրը և գիշերվա խավարը Ավարայրի դաշտի վրա, որը «պայծառացած կծաղկի, ոչ քե անձնաւրբ ամպերի՝ ջրերով, այլ վկաների սուրբ արյունով...»: Ավարայրում պատերազմը տանուլ տվեց պարսիկ բռնակալությունը:

— Չերկնչիմ և չվախենանք հերանոսների բազմությունից, ոչնչացնենք նրանց գորությունը... իսկ եթե հասել է ժամանակը մեր կյանքը սուրբ մահով ավարտելու այս պատերազմում, ընդունենք ուրախ սրտով, միայն քե արիության և ֆաշության մեջ վախկոտություն չխառնենք — վարդանի այս պատմական խոսքերը խանդավառել են հայ մարտիկներին ամեն անգամ, երբ նրանք նորից մարտի են դուրս եկել՝ վճռելու իրենց հայրենիքի և ժողովրդի բախտը:

Վարդանը հայրենասիրության, խիզախության խորհրդանիշ է: Նրա հերոսական կերպարը մինչև այսօր էլ հպարտությամբ է լցնում ամեն հայրենասեր մարդու սիրտը և խանդավառում նրան:

Վարդանանց անմահ հիշատակին նվիրված այս սրբազան օրը աղոթենք Բարձրալիք աշխարհին խաղաղություն պարգևելու համար: Բարեմաղթենք, որ է՛լ ավելի բարգավաճի և հզորանա մեր նվիրական հայրենիքը:

Հավետ անշարժ ու անսասան մնա լուստ խորան Ս. Էջմիածինը:

